



ՍԵՂՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 16072
Ք.ԵՐԵՎԱՆ ՑԱՆ ՌԱՑՆԻՄԻ 5/28
Հեռ. 093 33 06 19 055 24 36 38
E-mail: hgmsn@mail.ru

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի մշակույթի տան շենքի
տեխնիկական վիճակի և արևային մարտկոցների տեղադրման
հնարավորության վերաբերյալ

Քաղաքաշինության նախարարություն

Պետական լիցենզիա՝ 16 072

Հաստատում եմ՝

ՍԵՂՏԱԿ ՍՈՒՐԱԴՅԱՆ Անհատական ձեռնարկության

Տնօրեն՝



Ս. Մուրադյան

2020 թ.

ԵՋՏԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի մշակույթի տան շենքի
տեխնիկական վիճակի և արևային մարտկոցների տեղադրման
հնարավորության վերաբերյալ**

Պատվիրատու՝ Ղարիբջանյանի համայնքապետարան

Ընդհանուր դրույթներ

Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննման համար որպես
իրավական հիմքեր և նորմատիվային չափորոշիչներ հանդիսանում են.

-ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. փետրվարի 3-ի թիվ 24 հրամանով
հաստատված ՀՀՇՆ –II-6.02.2006 թ. ,, ՍԵՑՍՄՈԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ,, շիննորմերը:

-ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 282-N հրամանով
հաստատված ,, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ և ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅԱՆ և
ՎԿԱՅԱԳՐԱՎՈՐՄԱՆ (ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ,, :

Կախված առաջադրանքից և տեխնիկական անհրաժեշտությունից, կատարվում են
շենքերի հետազննության երկու ձևեր

-դիտողական

-դիտողագործիքային:

Ղիտողական հետազննության ժամանակ իհայտ են բերվում երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական, կոռոզիոն, կենսաբանական, այրվածքային և այլ տիպի վնասվածքները, միաժամանակ նշելով նրանց առաջացման հնարավոր պատճառները:

Շենքերի ղիտողագործիքային հետազննության ժամանակ լրացուցիչ կատարվում են նաև .

-Նստվածքների, ճկվածքների, ուղղաձիգ շեղումների, հենարանային հարթակների տեղափոխությունների և այլ չափումներ:

-Ճաքերի բացվածքի լայնության չափումներ:

-Կոնստրուկցիաների նյութերի ամրության որոշում չքայքայող և առաձգական հետհարվածի մեթոդներով:

-Բետոնի, ամրանների և մետաղե կոնստրուկցիաների կոռոզիոն վնասվածության, ինչպես նաև փայտյա կոնստրուկցիաների կենսաբանական վնասվածության գնահատում:

Հետազննությունների հիման վրա որոշվում է .

-կրող կոնստրուկցիաների վնասվածության աստիճանը,

-շինության ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը,

-շենքերի և շինությունների շահագործման համար պիտանելիությունը,

-տների և բնակարանների բնակության համար պիտանելիությունը:

Հետազննություններն իրականացվում են բացառապես նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, անաչառ և անկողմնակալ սկզբունքով՝ նախապես ներկայացված առաջադրանքների ու պայմանների համաձայն:

Հետազննության նպատակը

Կատարվել է Շիրակ մարզի Ղարիբջանյան համայնքի մշակույթի տան շենքի ակնադիտական զննություն հետևյալ նպատակով.

-Կատարել շենքի տեղանքի սեյսմոերկրաբանական բնութագրերի և փաստաթղթերի ուսումնասիրություն:



-Գնահատել շենքի կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը :

- Գնահատել շենքի կոնստրուկտիվ հատակագծային լուծումների համապատասխանությունը սեյսմոկայուն շինարարության գործող նորմերին:

-Գնահատել շենքի շահագործման պիտանելիությունն ու անվտանգությունը:

-Որոշել շենքի սեյսմոզինվածության բարձրացման անհրաժեշտությունը, նպատակահարմարությունը, մակարդակը և անհրաժեշտության դեպքում տալ դրանց սկզբունքային եղանակները:

-Որոշել շենքի տանիքի վերևում արևային մարտկոցների տեղադրման հնարավորությունը:

-Ներկայացնել մասնագիտական եզրակացություն կառույցի ընդհանուր սեյսմոկայունության վերաբերյալ, և տալ առաջարկներ անհրաժեշտ միջոցառումների մասին :

Տարածքի սեյսմոերկրաբանական պայմանները

Համաձայն ՀՀՇՆ- II- 6.02.2006 նորմերի հավելվածի, շենքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում, ըստ սեյսմիկության, երրորդ կարգի գրունտների վրա, հարթ ռելիեֆի պայմաններում:

Որպես հիմնատակ հանդիսանում են ավազակավային գրունտները:

Շենքի կոնստրուկտիվ նկարագրությունը

Շենքը կառուցված է 1970 թվականին տիպային նախագծով: Այն մի մասում երկհարկանի է , դահլիճային մասում՝ միահարկ, չունի նկուղ:

Շենքը հատակագծում պարզ ուրվագծով է , արևելք-արևմուտք կողմնորոշմամբ:

Շենքի արևելյան մասում մեծ դահլիճն է, որի երկու ծայրերում տեղակայված են խմբակների սենյակները: Միջին մասում, որտեղ գլխավոր մուտքն է, կա երկու հարկի բարձրությամբ նախասրահ, որի մեջ առաջին հարկի ծածկի մակարդակում ստեղծված է անտրեսոլային հարթակ ճաղաշար բազրիքով, որով հորիզոնական կապ է ստեղծվում երկրորդ հարկի սենյակների մեջ:

Հիմքերը ժապավենաձև երկաթբետոնից են, որի վրա իրականացված են պատերը և որմնախարիսիւր: Վերջինս արտաքինից երեսաշարված է քուրքատաշ բազալտով:

Զրոյական նիշից վերևի հատվածներում պատերն իրականացված են կտրված տուֆից, քարալյուրի ցեմենտաշաղախով: Գլխավոր և երկու եզրային ճակատների





Նկ. 1; 2;3. Ղարիբջանյանի մշակույթի տան շենքի տեսքերը :



կողմերից պատերը երեսաշարված են Արթիկի կտրված տուֆով, կարանների գծամշակմամբ: Ճակատային պատը, որում առկա են պատուհանի բացվածքներ շենքի ամբողջ բարձրությամբ, իրականացված է կոմպլեքս շարվածքով, միայն ներսից միակողմանի միաձույլ երկաթբետոնյա միջուկներով:

Հետագայում շենքի ճակատային կողմի մեծ պատուհանները ներքևից փոքրացրել են:

Շենքի միջին մասում կրող հանդիսանում են երկայնական քարային պատերը, եզրային հատվածներում՝ լայնական պատերը:

Դահլիճի և կից մասերում, պատերի մեջ, ծածկերի մակարդակում ստեղծված է անընդհատ հորիզոնական շրջակապող գոտի - բարավոր, որի վրա տեղադրված են դահլիճի ծածկի ֆերմաները և անցքավոր ծածկի սալերը:

Շենքի դահլիճային մասի տարածական կոշտությունը ապահովված է երկու կողմերում առկա երկհարկանի հատվածամասերով:

Ինքնակրող լայնական պատերի քայլը, ինչպես նաև պատերի շարվածքի տիպն ու նյութերը, միջնորմների կապերը, պատուհանների բացվածքների ու միջապատերի չափերի փոխհարաբերությունները չեն համապատասխանում սեյսմոկայուն շինարարության գործող նորմերի պահանջներին:

Երկհարկանի մասի յուրաքանչյուր հարկի ծածկի մակարդակում ստեղծված են անընդհատ երկաթբետոնյա բարավորներ, որոնք համակցված են միաձույլ երկաթբետոնյա գոտիների հետ:

Միջնորմները և ներքին բաժանարար պատերն իրականացված են կտրված տուֆից՝ միաձույլ երկաթբետոնյա բարավորներով:

Ծածկերը երկհարկանի մասում իրականացված են երկաթբետոնյա անցքավոր ծածկի սալերից, առանց միջսալային միաձույլ տեղամասերի:

Դահլիճի և կից նախասրահի մասում վերնածածկերն իրականացված են շվեյլերներից կազմված ծպեղնային ֆերմաներով, որոնց ներքևի գոտու մակարդակում ստեղծված են երկաթբետոնից միաձույլ ծածկի սալերը՝ մետաղական անկյունակներով կապերի և ալիքաձև ազդոշիֆերների վրա: Դահլիճի մասում ֆերմաների միջև միաձույլ երկաթբետոնյա սալերը ունեն թեք դիրքեր, դեկորատիվ շեղաձև տեսք ստանալու նպատակով:

Ֆերմաները հենվում են արտաքին երկայնական պատերի վրա ստեղծված անընդհատ գոտի - բարավորի վրա: Ֆերմաների երկայնական կոշտությունն ապահովված է խաչաձև կոշտության կապերով:





Նկ.4; 5; 6. Կտուրի մետաղական և փայտյա ծալեղնահամակարգի տարրերի տեսքերը



Կտուրն ու տանիքն իրականացված են ֆերմաների թեք ուրվագծով կառուցված մետաղական կտուրի և լրակառույց փայտամածի վրա պատրաստած ագրոշիֆերային ծածկույթով:

Ղահլիճին հարող հատվածներում վերնածածկը հավաքովի երկաթբետոնից է, իսկ կտուրը՝ փայտյա ծալեղնային համակարգով: Տանիքը ագրոշիֆերից է:

Եզրային և ներքին աստիճանավանդակների աստիճաններն իրականացված են մետաղական թեքահեծանների վրա տեղադրված առանձին աստիճանահատերից: Պատուհանները եզրային ճակատի կողմից մետաղոպլաստից են, դահլիճի մասում՝ փայտից: Դռները սենյակներում մետաղոպլաստից են, գլխավոր ճակատի կողմից՝ մետաղական շրջանակներով:

Տեխնիկական վիճակը

Ակնադիտական զննությամբ, չափագրությամբ, նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությամբ և կոնստրուկցիաների բացումից պարզվել է հետևյալը.

- Շենքի կրող տարրերը ամրության և սեյսմոկայունության վրա ազդող լուրջ վնասվածքներ չեն ստացել, միայն առանձին տեղերում, հատկապես դահլիճի պատերում և նրան հարող հատվածներում, որտեղ անձրևաջրերի ներթափանցումից թրջվել, քանդվել և փչացել են սվաղի մակերեսները, հատկապես ջրհորդանների տեղերում պատերը գերխոնավացել են, կարանները դատարկվել, ներքևի շարքերում որմնախարիսխի առանձին քարեր տեղաշարժվել են:

Պատերի նստվածքային և դեֆորմացիոն ճաքեր չեն նկատվում, սակայն առկա են անկանոն դասավորված տեղական բնույթի մազաճաքեր պատերի տարբեր հատվածներում՝ սվաղաշերտի մեջ:

Տանիքի անսարքությունից և առանձին տեղերում ագրոշիֆերի խախտումների ու կոտրվածքների, ինչպես նաև փեշերի անսարքությունների պատճառով, մեծ մակերեսներով թրջվել են պատերը և առաստաղները՝ հատկապես դահլիճային հատվածում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀՇՆ –II-6.02.2006 նորմերի և,, Բնակելի ու հասարակական շենքերի, շինությունների տեխնիկական վիճակի գնահատման և անձնագրավորման



մեթոդական ցուցումների,, Շիրակի մարզի Ղարիբջանյան համայնքի մշակույթի տան շենքի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի:

Շենքի ընդհանուր մաշվածություն գնահատվում է մոտ 40%:

Կրող տարրերի վիճակը գնահատվում է բավարար:

Նախատեսվող միջոցառումները

Էներգոխնայողության նպատակով նախատեսվում է տանիքի վրա տեղադրել արևային մարտկոցներ՝ արևելյան և հարավային լանջերի հատվածում:

Արևելյան կողմում կտուրի ծալեղնառուքերի ներքևի հատվածներն իրականացված են մետաղական ֆերմաներով ,որոնց շարունակությունը կառուցված է փայտյա չորսուներով :

Կտուրի հարավային լանջի ծալեղնահամակարգն ամբողջությամբ կառուցված է փայտյա չորսուներով:Ծալեղնառուքերը թռիչքի միջին հատվածում հենված են փայտյա գերանների վրա տեղադրված հորիզոնական պարզունակի վրա, որի միջոցով ապահովված է ծալեղնառուքերի կրողունակությունը:

Քանի որ արևային մարտկոցները տեղադրվելու են մոտավորապես հորիզոնական պարզունակի մակարդակում, ուստի ծալեղնահամակարգի լրացուցիչ ամրացում կարելի է չկատարել:

Անձրևաջրերի ներթափանցումից խուսափելու համար անհրաժեշտ է վերանորոգել տանիքածածկույթի կոտրված շիֆերները , փեշերն ու ջրհոսները:

Արևային մարտկոցների տեղադրումը թույլատրելի է:

Փորձագետ-կոնստրուկտոր,

ՀՀ Ճարտարագիտական Ակադեմիայի իսկական անդամ

տեխ.գիտ. թեկնածու, դոցենտ



/ Հ. Ս. Մուրադյան

Քաղաքաշինության նախարարության

Պետական լիցենզիա՝ 16 072